

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

(Գլուխ 60-րդ՝ վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ)

ԵՐԵՎԱՆ - 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ:

2. Խնդրի ձևակերպումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

3. Վերլուծություններ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխում առաջարկվող փոփոխությունների շրջանակը:

4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները և դրանց հիմնավորումները:

1. Ընդհանուր դրույթներ:

Կյանքի և առողջության իրավունքը քաղաքացիների համար, ինչպես նաև սեփականության իրավունքը քաղաքացիների և իրավաբանական անձանց համար հանդիսանում են հիմնական իրավունքներ: Մարդկության զարգացման ողջ ընթացքում մարդկային գործունեության հիմնական ուղղությունը և նպատակն են հանդիսացել այս արժեքների անվտանգության ապահովումը, դրանց պաշտպանությունը՝ նախատեսելով իրավաբանական պատասխանատվություն դրանց դեմ ոտնձգությունների դեպքում: Անշուշտ, յուրաքանչյուր ժամանակաշրջան այս խնդրի առնչությամբ դրսևորել է յուրովի մոտեցում: Կախված կոնկրետ ժամանակաշրջանում տիրող իրավաբանական կարգից՝ տարբեր է եղել մարդկանց վերաբերմունքը ոչ թե կյանքի, առողջության կամ սեփականության նկատմամբ՝ որպես արժեք, այլ՝ կոնկրետ անձի նկատմամբ՝ որպես հասարակության լիիրավ անդամ, այսինքն, այն, որ նախնադարում կամ միջնադարում շատ հեշտ կարող էին անձին անդամահատել, մահապատժի ենթարկել կամ զրկել սեփականությունից, չի նշանակում, որ տվյալ ժամանակաշրջանում չեն գնահատվել կյանքն ու առողջությունը, սեփականության իրավունքը, այլ, որն ավելի հավանական է, տվյալ ժամանակաշրջանի համար հասարակությունն ունեցել է իր՝ մարդու դերի գնահատման այլ համակարգ. մեկն ավելի բարձր է դասվել մյուսից, տերը՝ ստրուկից և այլն: Սա էլ հանգեցրել է նրան, որ տիրոջ ունեցվածքը ավելի է գնահատվել, քան ստրուկի կյանքը, սակայն հավասարների մեջ, անշուշտ, որպես բարձրագույն պաշտպանվող արժեք հանդես են եկել սեփականությունը, կյանքն ու առողջությունը:

Ներկայումս, երբ հասարակությունը բաղկացած է միայն հավասարներից, երբ սահմանադրությամբ և օրենքներով չկան դասային շերտավորումներ, բոլորն օգտվում են հավասար իրավունքներից և պարտականություններից, նոր և ավելի բարձր աստիճանի է բարձրացել այս արժեքների պաշտպանությունը: Սա են ամրագրում միջազգային պայմանագրերը, հռչակագրերը, երկրների սահմանադրական օրենքները, այլ իրավական ակտեր, որոնց թվում անհրաժեշտ է նշել 1948թ. դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրությունը և այլն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը» (հոդված 8), «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք» (հոդված 15), «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա

միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը» (հոդված 31), «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք» (հոդված 37), «Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ» (հոդված 31.1):

Սակայն սուկ սահմանադրական ամրագրումը բավարար չէ կյանքի և առողջության պահպանման համար. ծագում է անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման հարցը, որ ենթակա է օրենսդրական կանոնակարգման: Անհրաժեշտ են հստակ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, որոնք կսահմանեն պատասխանատվության մեխանիզմներ այն դեպքերի համար, երբ վնաս է հասցվել անձի կյանքին և առողջությանը:

Քննարկվող իրավահարաբերությունների համար Սահմանադրությունից հետո կարևորագույն իրավական աղբյուր է հանդիսանում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը:

Դելիկտային պարտավորությունների կարգավորմանն է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլուխը (1058-1091.1 հոդվածներ):

Ցանկացած օրենք և կարգավորում չի կարող լինել հարատև, և ժամանակի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում դրանում փոփոխություններ մտցնելու: Այս փոփոխությունները օբյեկտիվ անհրաժեշտություն են և բխում են հասարակական զարգացման տենդենցներից, իրավունքի կարգավորման նոր մոտեցումներից և այլն:

Օրենսգրքի 60-րդ գլուխը վերջին 16 տարիների ընթացքում կրել է մի շարք փոփոխություններ, որոնց մի մասը դրական է ազդել դրա կողմից հասարակական հարաբերությունների կարգավորման վրա, մյուս մասը եղել են ոչ անհրաժեշտ և ըստ էության բավականին թերի: Որպես օրինակ կարելի է բերել 1067 հոդվածում այն փոփոխությունը, երբ փոքրահասակների կողմից պատճառված վնասի հատուցման սուբյեկտները իրենց մեղքի բացակայությունը ապացուցելու փոխարեն, կատարված փոփոխության արդյունքում պետք է ապացուցեն փոքրահասակի մոտ մեղքի բացակայությունը: Իսկ այն, որ փոքրահասակները Օրենսգրքով դելիկտունակ չեն հստակ ամրագրված է (հոդվածներ 24 և 29), ու նոր փոփոխությամբ փոքրահասակի կողմից պատճառված ցանկացած վնաս կարող է և չհատուցվել:

Օրենսգրքի կարևոր նորություններից է նաև ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի ներմուծումը, անշարժ գույքի և կենդանիների սեփականատերերի պատասխանատվության ներմուծումը և այլն:

2. Խնդրի ձևակերպումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Օրենսգրքի 60-րդ գլուխը ունի բազմաթիվ փոփոխությունների կարիք: Այդ փոփոխությունները արդիական են և կարող են նպաստել Օրենսգրքի կողմից դեղիկտային պարտավորությունների ավելի ամբողջական և արդյունավետ կարգավորմանը:

Ինչպես արդեն նշվեց, Օրենսգրքն արդեն գործում է 16 տարի և այդ ընթացքում մի շարք նորմեր կորցրել են իրենց արդիականությունը, որոշներ, փոփոխության ենթարկվելով, ոչ միայն չեն նպաստել հարցի ավելի արդյունավետ կարգավորմանը, այլև խեղաթուրել են հողվածի էությունը, որոշ դեպքերում դարձնելով այն ընդհանրապես անկիրառելի: Որպես օրինակ վերևում նշվեց 1067 հողվածի 1-ին մասը, սակայն նույն հողվածը ամբողջությամբ կարելի է քննադատել:

Շտապ փոփոխության կարիք ունեն նաև 1079 և 1080 հողվածները, որտեղ վնասի հատուցման համար հաշվարկման հիմք է դիտվում նվազագույն աշխատավարձի հնգապատիկը: Եթե այդ հատուցման չափը հաշվենք ընդունված նվազագույն աշխատավարձի հաշվարկային դրույքով, այն է 1000 դրամով, ապա հատուցման չափը կլինի 5000 դրամը, որը աբսուրդ է, իսկ եթե սահմանված չափով՝ 50000 դրամով, ապա կլինի 300000 դրամ, որը ավելին է քան ՀՀ-ում գործող միջին աշխատավարձը և ծանր դրության մեջ կարող է դնել վնաս պատճառողներին: Այստեղ հարկ է ավելացնել, որ <<Նվազագույն աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի, օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումների, նախարարությունների և գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել սույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 դրամը:

Կարծում ենք օրենսգրքում պետք է հստակեցվեն ոչ նյութական վնասի հատուցման դեպքերը և այս հարցը ստանա ամբողջական կարգավորում, քանզի ներկայումս նման հատուցում սահմանված է միայն անձանց պատվի, արժանապատվության և գործարար համբավի արատավորման համար, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով սահմանված մի շարք իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված վնասի դեպքում: Կարծում ենք այստեղ բաց են մնացել ֆինանսական կազմակերպությունների կողմից իրավունքների չարաշահման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հարցերը, որոնք ևս պետք է կարգավորման ենթարկվեն:

Խիստ արդիական և անհրաժեշտ է Օրենսգրքում հստակեցնել պատճառված վնասի հատուցման համար հակաիրավական գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապի հարցը, ինչպես նաև օտարերկրյա փորձի հիման վրա սահմանել մեղքի աստիճանները որոշելու սկզբունքները:

Օրենսգիրքը չի սահմանում պատճառված վնասի արդյունքում աշխատունակության կորստ հետևանքով կորցրած աշխատավարձի հատուցման ժամանակահատվածը, ինչը առաջացնում է դժվարություններ որոշելու, թե որքան ժամանակ պետք է վճարվեն անձի աշխատունակության կորստի հետևանքով պատճառված վնասի համար սահմանված գումարները:

3. Վերլուծություններ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխում առաջարկվող փոփոխությունների շրջանակը:

Ինչպես նշվեց՝ շատ կանոն է, որ նոր փոփոխություններում արտացոլվի նաև պատճառական կապի հարցը, որպես վնաս պատճառելուց ծագող պարտավորությունների առաջացման հիմքերից մեկը: Ներկայումս Քաղ. օր-ը չի պարունակում ոչ մի դրույթ, որը պրակտիկայում հնարավորություն կտա պարզել, թե որ տեսակի պատճառական կապը կարող է հանդիսանալ դելիկտային պարտավորության առաջացման հիմք՝ ուղղակի, թե անուղղակի: Այնուամենայնիվ դատական պրակտիկան և տեսությունը շարժվում են այն ուղղությամբ, որ պատճառական կապը պետք է լինի ուղղակի: Կարծում ենք իրավական պրակտիկայի զարգացման ժամանակակից տենդենցները պարտավորեցնում են վերանայել բոլոր դեպքերում միայն ուղղակի պատճառական կապի առկայության հարցը և որոշ դեպքերում թույլատրել նաև անուղղակի պատճառական կապի առկայությունը դելիկտային պարտավորությունների առաջացման համար: Իհարկե ամեն դեպքում սա պետք է հանդիսանա օրենսդրական հստակ կարգավորման առարկա, ինչն առաջարկվում է անել փոփոխություններով:

Խիստ արդիական է փոփոխությունների կատարումը 1058, 1059, 1062, 1063, 1064, 1067, 1068, 1071, 1071.1, 1071.2, 1072, 1076, 1079, 1080, 1085 և մի շարք այլ հոդվածներում:

Առաջարկվում է Օրենսգիրքը լրացնել նոր հոդվածով, որով պատասխանատվություն կսահմանվի ֆինանսական կազմակերպությունների կողմից իրենց իրավունքների չարաշահման կամ պարտականությունների խախտման դեպքում ֆիզիկական անձանց պատճառված ոչ նյութական վնասի համար:

4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող մի շարք փոփոխությունները և դրանց հիմնավորումները:

Առաջարկում ենք նաև հետևյալ փոփոխություններն իրենց հիմնավորումներով.

1. Մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրենց աշխատակիցների անգործության հետևանքով պատճառված վնասի հարցերը հստակ կարգավորելու համար առաջարկում ենք ավելացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ՝

«Փրկարարական կամ ոստիկանական կազմակերպությունների աշխատակիցները պարտավոր են օգնել մասնագիտական պարտականությունները կատարելու ժամանակ իրենց դիմած անձանց:

Բժշկական կազմակերպությունների աշխատակիցները պարտավոր են օգնել պետական պատվերի շրջանակներում իրենց դիմած քաղաքացիներին:

Սույն հոդվածով նախատեսված դեպքերում փրկարարական, ոստիկանական կամ բժշկական կազմակերպությունների կամ դրանց աշխատակիցների անգործության պատճառով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման սույն օրենսգրքի 1062 հոդվածի կանոններին համապատասխան»:

2. Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել հետևյալ լրացումը. <<Սյն անձինք ովքեր իրենց գործողություններով նախադրյալ են ստեղծել վնասի առաջացման համար, իսկ անգործությամբ պատճառ հանդիսացել վնասի առաջացմանը, ինչպես նաև նրանք, ովքեր հնարավորություն են ունեցել առանց իրենց, իրենց մերձավորների կամ այլ անձանց վնաս պատճառելու նպաստել երրորդ անձին պատճառվող վնասի կանխմանը, սակայն չեն արել՝ պարտավոր են հատուցել իրենց անգործության արդյունքում պատճառված

վնասը>>: Առաջարկը ավելի հստակ պատկերացնելու համար բերենք հետևյալ օրինակը. Գ.-ն, ցանկանալով կողոպտել գետի ափով զբոսնող Ա.-ին, սկսում է հետապնդել վերջինիս: Նկատելով Գ.-ին՝ Ա.-ն փորձում է փախչել, սակայն վերջինիս ոտքը սայթաքում է, և Ա.-ն ընկնում է գետը: Գ.-ն չի օգնում Ա.-ին, հեռանում է դեպքի վայրից, և Ա.-ն խեղդվում է: Անշուշտ, քննարկվող դեպքում Գ.-ի գործողությունները ուղղված չեն եղել Ա.-ին սպանելուն, Գ.-ն կարող էր և վստահ լիներ, որ Ա.-ն կփրկվի, կարող էր վստահ չլինել, այսինքն, նա կարող էր չգիտակցել, որ հնարավոր է՝ գետում հայտնված Ա.-ն մահանա: Արդյո՞ք կարող ենք Գ.-ին պատասխանատվության կանչել Ա.-ին սպանելու համար: Գտնում ենք, որ ոչ, սակայն, քննարկվող խնդրի տեսանկյունից նայելով՝ տեսնում ենք, որ եթե Գ.-ն անգործության փոխարեն օգներ Ա.-ին, ապա վերջինս կփրկվեր: Փաստորեն, Ա.-ն մահացել է Գ.-ի / որը, հետապնդելով Ա.-ին, նախադրյալ է ստեղծել վերջինիս գետն ընկնելու համար/ անգործության հետևանքով:

Ինչպես վարվել, ենթակա՞ է Գ.-ն քաղաքացիաիրավական պատասխանատվության Ա.-ի մահվան համար, թե՞ ոչ: Ինչպես նշեցինք վերը, մենք խնդիրը ուսումնասիրելու ենք նաև բարոյականության և հասարակության շահերի պաշտպանության համատեքստում: Ուստի, ելնելով հենց այդ սկզբունքներից, ինչպես նաև այն հանգամանքից, որ ակնհայտ է Ա.-ի մահվան հիմքում Գ.-ի անգործությունը և դերակատարումը, գտնում ենք, որ քննարկվող դեպքերի համար Գ.-ն /Գ.-ի պայմանական անվան տակ նկատի ունենք այն անհանգ, ովքեր իրենց գործողություններով նախադրյալ են ստեղծել վնասի համար, իսկ անգործության հետևանքով առաջացել է վնասը/ ենթակա է քաղաքացիական պատասխանատվության Ա.-ի մահվան համար, որը արդյունք է Գ.-ի անգործության:

3. Գտնում ենք, որ իրավաբանական անձանց պատասխանատվության ուսումնասիրությունը վերջիններիս աշխատակիցների կողմից պատճառված վնասի համար չպետք է սահմանափակվի միայն աշխատանքային պայմանագրով աշխատող աշխատակիցների կողմից պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրների քննարկմամբ: Ելնելով այն հանգամանքից, որ ներկայումս ՀՀ-ում իրավաբանական անձանց իրավակազմակերպական տեսակները իրենցից ենթադրում են, որ իրավաբանական անձինք կարող են ունենալ ոչ միայն աշխատանքային պայմանագրով աշխատողներ, այլև գործադիր մարմիններ (տնօրենների խորհուրդ, տնօրեն), որոնք կազմավորվում են ընդհանուր ժողովների կողմից, և որոնց գործողությունների արդյունքում նույնպես կարող է վնաս պատճառվել երրորդ անձանց, կարևոր ենք համարում քննարկել նաև իրավաբանական անձանց կորպորատիվ մարմինների կողմից պատճառված վնասի հատուցումը:

Ուստի, ելնելով հենց այդ սկզբունքից, գտնում ենք, որ Քաղ. օր-ի 1062 հոդվածի երկրորդ մասը ունի վերախմբագրման կարիք և առաջարկում ենք հոդվածում ավելացնել չորրորդ մաս, որով կամրագրվի. *«Իրավաբանական անձը պարտավոր է հատուցել նաև իր կառավարման մարմիններում (տնօրենների խորհուրդ, սնանկության կառավարիչ, գործադիր մարմին) ընդգրկված անձանց կողմից պատճառված վնասը, եթե վնասը պատճառվել է վերջիններիս կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալիս և ընկերության կանոնադրությամբ իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս»:*

4. Ամբողջությամբ վերանայման կարիք ունի 1067 հոդվածը: Ինչպես նշվեց հոդվածը ներկա խմբագրությամբ առաջացնում է այնպիսի իրավական վիճակ, որի դեպքում փոքրահասակի կողմից պատճառված վնասը կարող է և չհատուցվել: Անհասկանալի և մեր կարծիքով թերի են նաև լիազորությունների փոխանցմամբ փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի պատասխանատվությունից ազատող հանգամանքները:

Ուստի առաջարկում ենք հոդվածը վերախմբագրել ստորև խմբագրությամբ.
«1. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

2. Եթե խնամակալության կարիք ունեցող փոքրահասակը գտնվել է համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ նմանօրինակ հաստատությունում, որն օրենքի ուժով նրա խնամակալն է (հոդված 37), այդ հաստատությունը պարտավոր է հատուցել փոքրահասակի պատճառած վնասը, եթե չի ապացուցում, որ վնասը իր մեղքով չի պատճառվել:

3. Եթե փոքրահասակը վնաս է պատճառել այն ժամանակ, երբ նա գտնվել է կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության հսկողության ներքո, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ կամ պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի հսկողության ներքո, այդ հաստատությունը կամ անձը պատասխանատվություն է կրում փոքրահասակի պատճառած վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել, և/կամ եթե այլ բան նախատեսված չէ փոքրահասակի ծնողների, որդեգրողների կամ խնամակալի և կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության միջև կնքված պայմանագրով:

3. 1. Այն անձը, որն օժտված չէ ծնողական իրավագործությամբ, որին, սակայն, լիազորությունների փոխանցմամբ կամ որևէ այլ ճանապարհով վստահվել է անչափահասի նկատմամբ խնամքի, հսկողության կամ դաստիարակության իրականացումը, պարտավոր է հատուցել անչափահասի գործողությունների հետևանքով պատճառված վնասը, եթե չի ապացուցում, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, և/կամ եթե այլ բան նախատեսված չէ լիազորողի կամ վստահողի և անչափահասի նկատմամբ խնամք, հսկողություն կամ դաստիարակություն իրականացնողի միջև կնքված պայմանագրով:

4. Փոքրահասակի պատճառած վնասը հատուցելու, ծնողների, որդեգրողների, խնամակալի, կրթական, դաստիարակչական, բուժական, այլ հաստատությունների և անձանց պարտականությունը չի դադարում փոքրահասակի չափահաս տարիքի հասնելով կամ նրա կողմից վնասը հատուցելու համար բավարար գույք ստանալով:

5. Եթե ծնողները, որդեգրողները, խնամակալը կամ սույն հոդվածի 3-րդ կետում նշված այլ քաղաքացիները մահացել են կամ բավարար միջոցներ չունեն տուժածի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու համար, իսկ վնաս պատճառողը, դառնալով լրիվ գործունակ, ունի այդպիսի միջոցներ, դատարանը, հաշվի առնելով տուժողի և վնաս պատճառողի գույքային դրությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ, իրավունք ունի վճիռ կայացնել վնասի հատուցումը լրիվ կամ մասնակիորեն վնաս պատճառողի վրա դնելու մասին:»:

5. 1068 հոդվածի հետ կապված գտնում ենք, որ օրենսգրքում պետք է հստակեցվի, որ ծնողները, որդեգրողները կամ խնամակալները պետք է լրիվ չափով հատուցեն անչափահասի կողմից հասցված վնասը միայն այն դեպքում, երբ անչափահասը չունի ոչ մի եկամուտի աղբյուր կամ գույք, իսկ այդպիսինի առկայության դեպքում նախ և առաջ վնասի հատուցումը պետք է դրվի տասնչորսից տասնութ տարեկան անչափահասի, ապա մնացած մասը նոր՝ նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի վրա: Սա բացատրվում է նրանով, որ Օրենսդիրը սահմանում է, որ վերոնշյալ սուբյեկտները վնասը պետք է հատուցեն լրիվ կամ պակասող մասով, եթե անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ գույք: Ստացվում է, որ վնասի հատուցումը կարող է իրականացվել՝ վնասի փոխհատուցում գանձելով ինչպես ծնողներից, այնպես էլ երեխաներից, և երեխաներից վնասի փոխհատուցում բռնագանձելը չի բացառում վնասի դիմաց ծնողներից ևս - հատուցում ստանալը: Հոդվածից բխում է նաև, որ եթե անչափահասը չի կարող լրիվ փոխհատուցել իր կողմից հասցված վնասը, ապա այդ վնասը լրիվ կարող է հատուցվել ծնողների կողմից: Այս մոտեցումը, թերևս, սխալ է, քանի որ անչափահասի կողմից վնասի լրիվ հատուցման անկարողությունը չի նշանակում, որ անչա-

փահասը պետք է ամբողջովին ազատվի պատասխանատվությունից. չէ՞ որ վնասի լրիվ փոխհատուցման մեջ մտնում է վնասի 100% հատուցումը, իսկ ոչ լրիվի մեջ կարող է մտնել նույնիսկ 98%-ը:

Օրենսգրքի բացթողում է նաև այն հարցը, որ համաձայն Քաղ. օր.-ի 1068 հոդվածի 4-րդ մասի, տասնչորից մինչև տասնութ տարեկան անչափահասների պատճառած վնասը հատուցելու ծնողների, որդեգրողների, հոգաբարձուների և համապատասխան հաստատության պարտականությունը դադարում է վնաս պատճառողի չափահաս տարիքի հասնելուց հետո կամ այն դեպքերում, երբ մինչև չափահաս դառնալը նա ձեռք է բերել եկամուտներ կամ այլ գույք, որը բավարար է վնասը հատուցելու համար, կամ նա գործունակություն է ձեռք բերել մինչև չափահաս տարիքի հասնելը: Անչափահասի լրիվ գործունակ դառնալուց հետո ծնողների, որդեգրողների և հոգաբարձուների պատասխանատվությունը դադարում է անկախ նրանից, թե իրավախախտողը ունի՞ բավարար գույք վնասի հետագա հատուցման համար, թե՞ ոչ:

Կարծում ենք՝ այս հանգամանքը չի բխում քաղաքացիական հասարակության շահերից, քանի որ շատ հնարավոր է, որ չափահաս դարձած անձը չունենա ինքնուրույն եկամուտ և հնարավորություն՝ փոխհատուցելու իր կողմից հասցված վնասը, իսկ ծնողներին անչափահասի չափահաս դառնալու կապակցությամբ ազատելով վնասի հատուցման պարտականությունից՝ փաստորեն օրենքի նշյալ սահմանմամբ ստեղծվում է մի իրավիճակ, երբ տուժողը չի ստանում իր կրած վնասի փոխհատուցումը:

Կարծում ենք ծնողները կամ մյուս սուբյեկտների պատասխանատվությունը պետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի վնաս պատճառողը ձեռք չի բերել բավարար գույք ինքնուրույն վնասը հատուցելու համար:

Ուստի առաջարկում ենք ՀՀ քաղ. օր.-ի 1068 հոդված շարադրել հետևյալ կերպ. << **1. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:**

2. Այն դեպքում, երբ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք, վնասը լրիվ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե տուժողն ապացուցում է, որ վնասը նրանց մեղքով է պատճառվել:

3. Եթե հոգաբարձության կարիք ունեցող տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը գտնվում է համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում կամ օրենքի ուժով նրա հոգաբարձու հանդիսացող այլ հաստատությունում (հոդված 37), այդ հաստատությունը պարտավոր է հատուցել նրա պատճառած վնասը լրիվ կամ չբավարարող մասով, եթե տուժողն ապացուցում է, որ վնասը նրանց մեղքով է պատճառվել:

4. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասը հատուցելու ծնողների, որդեգրողների, հոգաբարձուի և համապատասխան հաստատության պարտականությունը ամբողջությամբ դադարում է միայն այն դեպքում, երբ անչափահասը ձեռք է բերել եկամուտներ կամ գույք, որը բավարար է վնասը հատուցելու համար>>:

6. Անհրաժեշտ է հանել 1071 հոդվածի 3-րդ մասը, քանի որ այդ մասը ընդհանրապես կապ չունի հոդվածի հետ: Ցանկալի է այդ մասը տանել 1069 հոդված: Արդյունքում 1069 հոդվածը շարադրել հետևյալ կերպ.

1. Անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասը հատուցում է խնամակալը կամ այն կազմակերպությունը, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ, եթե չի ապացուցում, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:
2. Խնամակալի կամ հսկողություն իրականացնելու համար պարտավոր կազմակերպության անգործունակ ճանաչված քաղաքացու վնասի հատուցման պարտականությունը չի դադարում հետագայում նրան գործունակ ճանաչելու դեպքում:
3. Եթե խնամակալը մահացել է կամ բավարար միջոցներ չունի տուժողի կյանքին և առողջությանը պատճառված վնասը հատուցելու համար, իսկ վնաս պատճառողն ունի նման միջոցներ, դատարանն իրավունք ունի, տուժողի ու վնաս պատճառողի գույքային դրության և այլ հանգամանքների հաշվառմամբ, վճիռ կայացնել վնասի հատուցումը լրիվ կամ մասնակիորեն վնաս պատճառողի վրա դնելու մասին:
4. Եթե վնասը պատճառվել է անձի կողմից, որը հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, դատարանը կարող է վնասը հատուցելու պարտականությունը դնել այդ անձի հետ համատեղ բնակվող աշխատունակ ամուսնու, ծնողների, չափահաս երեխաների վրա, ովքեր իմացել են վնաս պատճառողի հոգեկան խանգարման մասին, սակայն չեն բարձրացրել նրան անգործունակ ճանաչելու հարցը:

7. Էական փոփոխությունների կարիք ունի 1072 հոդվածը: Մասնավորապես կարծում ենք հոդվածում պետք է հստակեցվեն <<սեփականատեր>> և <<օրինական տիրապետող>> հասկացությունները: Այլապես նման պայմաններում դժվար է դառնում հստակ որոշել պատասխանատվության սուբյեկտներին, ինչպես նաև առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը և տիրապետողին պատասխանատվությունից ազատելու հարցերին:

Օրինակ հոդվածը սահմանում է՝ <<Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ

օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա»։ Սրանով պատասխանատվության սուբյեկտ են դիտվում ինչպես սեփականատերը, այնպես էլ օրինական տիրապետողը։ Սակայն նույն հոդվածը վնասից ազատելու հանգամանքների մեջ նշում է՝ «<Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ սույն օրենսգրքի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով>»։ Ստացվում է, որ օրինական տիրապետող պատճառված վնասից ազատելու հիմքեր օրենսգրքը չի նախատեսում, որն անընդունելի է։ Նույնը վերաբերում է նաև 1072 հոդվածի 2-րդ մասի կարգավորմանը։

8. Կարծում ենք 1072 հոդվածում անհրաժեշտ է սահմանել անհաղթահարելի ուժի հասկացությունը։

9. 1076 հոդվածը սահմանում է նաև, որ տուժողի մեղքը հաշվի չի առնվում լրացուցիչ ծախսերը (1078 հոդվածի 1-ին մաս), կերակրողի մահվամբ ծագած վնասը (1082 հոդված), ինչպես նաև թաղման ծախսերը հատուցելիս (1087 հոդված)։ Կարծում ենք՝ այս դեպքում նույնպես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վնասը կարող է պատճառվել տուժողի դիտավորության հետևանքով կամ վնասը պատճառողի կողմից անհրաժեշտ պաշտպանության վիճակում, ուստի և ողջ պատասխանատվությունը դնել վնասը պատճառողի վրա ճիշտ չէ։ Արդյոք պե՞տք է հուղակավորության հետ կապված կամ այլ ծախսերը դնել մեկի վրա, որը մահ է պատճառել իր վրա հարձակվողին՝ գործելով քաղ. օր-ի 1060 հոդվածի, այսինքն՝ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում։

Առաջարկում ենք 1076 հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ կերպ. **«Եթե վնաս պատճառողի գործողություններում բացակայում են անհրաժեշտ պաշտպանության հատկանիշները (1060 հոդված), ապա տուժողի մեղքը հաշվի չի առնվում լրացուցիչ ծախսերը (1078 հոդվածի 1-ին կետ), կերակրողի մահվամբ ծագած վնասը (1082 հոդված), ինչպես նաև թաղման ծախսերը հատուցելիս (1087 հոդված)»**։

10. Օրենսգրքի 1087 հոդվածից առաջարկում ենք հանել «<զերակա հանրային շահ>> հասկացությունը, որը հոդվածում բացահայտված չէ, և ըստ էության անհասկանալի է, թե ինչ նպատակ է հետապնդում։

11. Օրենսգրքի 1079 և 1080 հոդվածներում, որտեղ վնասի հատուցման համար հաշվարկման հիմք է դիտվում նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, առաջարկում ենք կատարել փոփոխություն և վնասի հատուցման

գումար սահմանել ՀՀ օրենսդրությամբ ընդունված նվազագույն աշխատավարձը, որը գործատուն պարտավոր է վճարել աշխատողին քառասունժամյա աշխատանքային շաբաթվա համար:

12. Անհրաժեշտ է Օրենսգրքի 1085 հոդվածում սահմանել աշխատունակության կորստի հետևանքով տրամադրվող հատուցման վճարման ժամանակահատվածը:

13. Առաջարկում ենք Punitive damage-ը կիրառել Հայաստանում քաղաքացիաիրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտների նկատմամբ: Մեր կարծիքով նման ինստիտուտի ներառումը կնպաստի հասարակական հարաբերություններում սուբյեկտների խախտված իրավունքների ավելի ռեալ պաշտպանությանը: Փորձագետները ունեն մտավախություններ ՀՀ-ում դրա կիրառման առանձնահատկությունների մասով, միանշանակ կարծիք չունեն վնասի հատուցման ծավալների և հատկապես վնասի առավելագույն չափի որոշման հարցում: Կարծիքներ կան սահմանել հատակ սահմանաչափ կամ դրա սահմանման որոշումը թողնել դատարանի հայեցողությանը: Այս կապակցությամբ, վերջնական կարծիքի հասնելու համար, կարևոր է նաև միջազգային փորձագետների կարծիքը: Կարևոր է նշել, որ ՀՀ օրենսդրությունը արդեն իսկ նախատեսում է ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմներ (օրինակ Քաղ. օր. 1087.1 և 1087.2 հոդվածներ: Դեռ ավելին, հարկ է նշել, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը արդեն իսկ նախատեսում է, որ կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի բռնագանձվում է միանվագ երեք հարյուր հազար դրամ):

14. Կարևորելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱԺ օրակարգում է նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և, խիստ կարևորելով ոչ հանրամատչելի անձնական տվյալների հակաօրինական բացահայտման դեպում անձանց պատճառված ոչ նյութական վնասը, առաջարկում ենք Օրենսգրքում ներառել նաև անձնական տվյալների ապօրինի ձևով երրորդ անձանց փոխանցման դեպքում ոչ նյութական վնասի հատուցում:

Մեր կողմից ուսումնասիրվել են նաև պրոֆեսոր Ռոլֆ Քնիպերի կողմից 2013թ. նոյեմբերին Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի վերլուծության արդյունքում առաջարկվող փոփոխությունները, որոնց մեծ մասը ընդունելի են և պետք է ներառվեն փոփոխված Օրենսգրքում: